

ԲԱԺՆԵԳԻՆ


ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 Լ.
Վեցամս. 25 "

ԱՐՏԱՍԱՀԱՄՆ
Տարեկ. 13 ֆր.
Վեցամս. 7 "

Ամերիկա
2 ՏՊ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Դրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Կրօնականք ետ
չեն տրուիր:

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Դրշ. ողջ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՍԵՊՏ. 16 ՀԻՆԳՇԱՐԹԻ 1903

ԹԻԻ 273

ԳՐԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՐՈՏՈՒԹԻՒՆ

ԱՆԿԵՂՇՈՒԹԻՒՆ

(Ծառ. եւ Վերջ)

Բ. Համեստութիւն. — Համեստութիւն. ա-
տոր ալ փաստները տարբեր են:

Մի կարծիք, բարեկամներս, որ համեստու-
թիւնն այնչափ աղօթք բան մ'է, որչափ կը գո-
վեն բանաստեղծները, վարժապետներն ու գրա-
պետները, այդ խումբ մը անկեղծ մարդիկը,
որք իրենց քարոզութիւններէն ոչ մէկուն հե-
տեւելու սովորութիւնն ունին: Չեմ ալ ըսեր թէ
համեստութիւնը գէշ բան մ'է, բայց ամեն բան
իր աստիճանի մէջ: «Նախ դուք ինքզինքնիդ
գովեցէք, որ ուրիշներն ալ ձեզ գովեն», կըսէ
չեմ յիշեր որ նշանաւոր բանաստեղծը: Ի՞նչ կը-
սէք ասոր: Համեստացուցութեան համար ուզած-
նուդ չափ ըսէք: «Ես ապուշ եմ, ես տգէտ եմ,
ես տխմար եմ»: մէկը չպիտի գտնուի որ ձեր
ըսածներն հերքելով պատասխանէ: «ճանըմ,
ի՞նչ կըսէք, դուք շատ խելացի էք, շատ զար-
գացած էք եւն»: Ընդհակառակը, ձեր ըսածներն
հաստատելու համար, իրենք ալ իրենց կողմէն

այնչափ մը պիտի աւելցնեն՝ ձեր խոստովանու-
թիւններէն քաջալերուած:

Անկեղծութիւն. — Շիտակը դիւրին բան չէ.
եթէ այսօր փորձենք անկեղծ ըլլալ, ապահովա-
բար առաջին անգամ մեր գէշն եյնող մարդուն
առանց «բարեկամութեան» մը ըսելու պէտք
է մեր վկաները զրկենք հետեւեալ օրը մենամար-
տելու համար, (եթէ երկրին օրէնքը թոյլատրէ
մենամարտը): Եթէ ուզենք անկեղծ ըլլալ, նախ
անհրաժեշտ է որ մարդու հետ չտեսնուինք, ըն-
կերութեան մէջ չմտնենք, կնոջ մը առջեւ չի-
քծնինք, որովհետեւ եթէ այդչափ դիմակաւոր-
ներուն մէջ մինակ մենք դիմակինս վար առ-
նենք, ապահով եղէք որ ազտօտ աւելով կը վը-
ռնտեն մեզ: Մտածեցէք որ ձեր խելքէն անցա-
ծըն առանց ծածկելու պիտի ըսէք, և որովհե-
տեւ ձեր խելքէն անցածն հարկերն իննսունն
ինն ու կէս դիմացիննուդ ախորժին չպիտի եր-
թայ... կը տեսնէք թէ կուրս ուրկէ կը փրդի-
երևակայեցէք աղնիւ ընթերցողներն ու գերադ-
նիւ ընթերցողներն, այն պատկերներն որք տե-
ղի պիտի ունենան և այն մնչկատակային ծամա-
ծռումները զորս գէմքերը պիտի ստանան, երբ
անկեղծաբար ըսենք ինչ որ կը մտածենք:

Մարդուկ մը՝ շատ սիրուն սրամտութիւն մը
ընելու պէս՝ ամենատափակ ցաւագարութիւն մը
դուրս կուտայ. և որովհետեւ դուք չէք կրնար չը-
սել ինչ որ կը մտածէք, սա կարճ գովեստը կը
նետէք երեսին: «Ներեցէք, պարոն, շատ տըխ-
մար էք»:

Օրիորդ մը՝ վերջին նորաձևութեան համա-
ձայն շրջադրեալ մը կտրել տալով՝ առաջին ան-
գամ կը հագնի և հարիւր անգամ հայելին
առջեւ դառնալէ ետք, կը հարցնէ ձեզի. «Ի՞նչ-
պէս եղայ», եւ որովհետեւ դուք միշտ չափազանց
անկեղծ ըլլալու առաւելութիւնը կամ թերու-
թիւնն ունիք, կը պատասխանէք. «Օրիորդ, ար-
դէն տգեղ էիք և այս զգեստով անգամ մըն ալ
տգեղցար»:

Արդ, ազնիւ ընթերցողներ ու դերազնիւ
ընթերցողներ, վերջացելով մեր խօսքը, քա-
նի որ ո՛չ դուք, ո՛չ ալ ես երբէք ո՛չ միտք ոչ ալ
գիտաւորութիւն ունինք մեր կեանքին մնացած
օրերը Սահարայի անապատին մէջ ճգնաւորու-
թեամբ անցընելու, եւ քանի որ մեր ամենուս
ալ նպատակն է ընկերութեան մէջ ապրիլ, մեր
ձեռնարկներուն մէջ յաջողիլ և մանաւանդ կի-
ններուն հաճելի երևալ, ուստի մեզի անհրաժեշտ
է սա օղորդ. — Գիշ մը քաղաքավարութիւն, քիչ
մը ինքնազուլութիւն եւ քիչ մ'ալ. . . կեզծա-
ւորութիւն:

ԵԹՕԼ

ԱՅԴԱՅԻՔ

Սիսի Կաթողիկոսական Տեղապահ Կիրակոս
Եպիս. օգոստ. 21ին վախճանելով, մայրավանքի
շրջափակին մէջ իր իսկ պատրաստել տուած գե-
րեզմանին մէջ թաղեր են:

— Խառն ժողովոյ վերջին նստին մէջ հետեւեալ
որոշումները տրուած է Երուսաղէմի մասին.

1. Առաջարկուեր է Տ. Յարութիւն Պատրի-
արքի, որ տաճարամեայ հաշիւները Պատրիարքա-
րանին հաղորդէ.

2. Երուեր է Ն. Ամենապատուութեան որ,
բողոքող վարդապետներէ երեքին հրամայէ Պա-
լիս երթալ, որպէս զի արդարացնեն իրենց ամ-
բաստանութիւնները.

3. Տ. Յարութիւն Պատրիարքի տնօրէնու-
թեան յանձնուեր է՝ Տնօրէն ժողովոյ անդամոց
մէկը, եւ եթէ պատշաճ կը համարի՝ Տ. Ղեւոնդ
վարդապետը, որ Տնօրէն ժողովոյ ատենապետ է

և Ելեմից տեսուչ, Պոլիս գրկել, ամբաստանու-
թիւններն լսելու և պատասխանելու համար:

— Ռուսիոյ ազգայիններէն Պ. Սողոմոն Բաբա-
նոսեանց՝ 150 հազար թուլի արժող մէկ շէնքը
Կիլիկիոյ Կաթողիկոսական աթոռին նուիրեր է.
պայմանաւ որ վաճառուի ու դրամը Տ. Սահակ
Կաթողիկոսին զրկուի՝ եկեղեցական ու կրթական
գործոց համար: Էջմիածնի պիտի նուիրէ եղեր,
բայց զանց ըրեր է եկեղեցապատկան կալուածոց
յափշտակութեան ծանօթ խնդրոյն առթիւ:

— Մուշէն Պատրիարքարանի իմացուցեր են
թէ Ս. Կարապետ վանքի որբանոցը փակուել է,
որովհետեւ նպաստից Յետուկը ժամանակէ մը ի
վեր դադարեցուցած էր նոյն որբանոցին համար
սահմանեալ նպաստը, առ ի չգոյէ դրամի:

(Այս տողերը Վառնայի որբանոցի կարգա-
լով, թող տակաւին շարունակէ հաւաքած դրամ-
ներուն մէկ մեծ մասին վրայ նայելով միմիկա-
րուիլ)

— Մանչեսթրի Հայոց նախորդ հովիւ Տ. Թէո-
դորոս քահանայ Զուղայեցի, Հայրապետական հը-
րամանու Պարսկահայ թեմերուն այցելութիւն մը
ընելէ ետքը, Որմիոյ փոխանորդ կարգուեր է, և
պիտի հաճուէ նոյն քաղաքին ու շրջակայ գիւղե-
րու ազգայինները:

— Պուքրէշէ (Ռումանիա) կը գրեն թէ, Աստ-
ուածածնայ տօնին օրը Պատարագի միջոցին կը-
ռիւ մը ծագած է, որու հետեւանքով 22 դաղա-
թական և մէկ քանի Պուքրէշցի հայեր ձերբա-
կալուած են: Պաշտօնի վրայ գտնուող Թաղական
խորհրդոյատենապետ Դ. Եօաքիմէսքօի դէմ հատ-
ուած մը կազմուած էր, զինքը հրաժարեցնելու
համար, զի 15 տարիէ ի վեր պաշտօնի վրայ
գտնուելով, 100,000 ֆր. զեղծում մը ըրած է
և վեց ամիսէ ի վեր եկեղեցական ու դպրոցա-
կան պաշտօնէից ամուսկան չէ վճարած, հա-
կառակ եկեղեցւոյ ունեցած 27,000 ֆր. եկա-
մուտին: Ժողովուրդը չհանդուրժելով, իրենց
գլուխն ունենալով Պ. Միտակ Ղեւոնդեան ծե-
րունին, գաւազաններով կը յարձակին, մի քա-
նի կիներ կը մարին, գլուխներ կը պատռին ու
ոստիկանութիւնը միջամտելով կը ձերբակալէ:
Ներկայք որոշում մը կը քուէարկեն, որով Դա-
նիէլ Եօաքիմէսքօ (Յովակիմեան) կը հրաժարե-

ցնեմնե առժամեայ Թագ. խորհուրդ մը կը կազմեն: (Բոժ. — Հա՛ շէօյլէ): Կրօնի թէ Տ. Խաչատուր լահանան ուստ վկայութիւն տուած է թէ՛ Պատարագի մէջոցին մինակ գաղթականները եկած ու Պատարագը խանգարած են, ինչ որ տեղական օրէնքը խիստ պատժի կենթարկէ: Առժամապէս եկեղեցին գոցուեր ու բանալիները կառավարութեան յանձնուած են եղեր թէեւ, բայց Բշ. մեռելոցի օրը վերաբացուեր է:

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ի նպաստ Տիգրան Երկաթի մատենադարանին, երեքշաբթի գիշեր Բիրամիտի թատրոնին մէջ տրուած եզական երեկոյթի մասին գրելիք քրոնիկ՝ հետեւեալ չորս տողերուն մէջ կ'ամփոփեմ.

Թատրոնն էր լիւի լեցուն,
Իսկ խաղը՝ շատ սիրուն,
Որ հաճոյք պատճառեց
Մինչև վերջն ամենուն:

Թ/ն 25. Քօթեօյլ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Բ

Ամերիկայի մէջ այլանդակ նորութիւն մ'եղեր է՝ կանանց ըզուրոյնեցումն ծայրերը ադամանդով զարդարել. նիւ Եւրօքի նշանաւոր ոսկերիչներէն Ալեքսանդր մէկ վայրկեանի մէջ յաճախորդներուն ըզուրոյնեցումն կ'անցունէ ադամանդին մէկ քրադին ութերորդ մասն: Հարուստ դարու տիկնանց մասներուն ծայրը 2-3000 տոլարի ադամանդ կը գտնուի. Երգեցիկ զբօսարանի մը երգչուհիի մը ոտքի ու ձեռքի մասներուն ադամանդները 100 հազար ֆրանք կ'արժեն եղեր: Ադամանդները փոխել հարկ կ'ըլլայ ամէն անգամ որ ըզուրոյնեցը կը մեծնան:

Ահա մօտ մը՝ որուն հետ կարծենք չպիտի կրնան համաձայնիլ մեր ամեն դասակարգի պըճնասէր տիկիներն ու օրիորդները:

Բոժ. — Ինչո՞ւ. սուտիկէ քարերը (սրբա՛ քօն պախ) ողջ ըլլան, մերիններն ալ պանոնք գործածելով՝ Ամերիկացիներէն ետ չեն մնար:

— Սպանիոյ Պարսըլոն քաղաքի մէջ ճարտան մը կտր, որ տարիէ մը ի վեր սկսած էր յաճախորդները կռուել կերակուրէն առաջ ու ետքը: Յաճախորդը ճաշէն ետքը կը կշռուի, և ճաշէն առաջ կռուէն սրչափ աւելի ըլլայ, այնչափ կը վճարէ: Բայց տեսնուեր են անանկ յաճախորդներ, որ ճաշէն ետքը՝ ճաշէն առաջ ունեցած ծանրութենէն պակաս կշռուեր են ու գրամ չը վճարելով երթալու իրաւունք ունեցեր են: Հետազօտութեամբ հաստատուեր է որ, յաճախորդաց շատերը ճաշարան մտնելու ատեն իրենց գրպանները խճաքարերով (չազըլ թաշը) կը լեցունեն ու մեկնելու ատեն ճաշարանին պարտէ՛ւը կը նետեն եղեր:

Ճաշարանապետը փնտուելով, սնանկացեր է:
Բոժ. — Ապուշը. ու ալէկ չէ խենթեցեր:

— Զինատանի մէջ տեղ տեղ, մանչ ու աղջիկ՝ 14 տարեկան հասակի մէջ՝ արհեստական ներկերով կը գունաւորեն իրենց ակռաները, սանախապաշարմամբ թէ՛ անվայել է ճերմակ ակռաներ ունենալ, շուներու ու փիղերու նման:

— Փրանսայի կողմէ 1870ին Գերմանիոյ վճարուած պատերազմական հարկը՝ հինգ միլիառ ֆրանք, Պէրլինէ 15 միլիոն հեռու գիւղի մը մէջ ամբողջովին պահուած է երկաթէ մեծ սնտուկներով: Այդ գիւղն ու շրջակաները կը պահպանեն բա մ'աթիւ զինուորներ, ու կարելի չէ որ մէկը գողութեան նպատակաւ մօտենայ այդ գանձին ու յաջողի և անպատուհաս մնայ:

Բոժ. — Ու կարելի չէ նաև որ Գերմանիա ալ յաջողի այդ գումարը կըլլել ու անպատուհաս մնալ, վասն զի, ձուկի փուշ է ան:

ՎՐԻՊԱԿ

Թերթիս 265 և 266 թիւերու մէջ «Կեանքը Հապէշիսթանի մէջ» խորագրով յօդուածը՝ Տիար Վ. Պօղոսեանի կողմէ զրկուած է եղեր, որ գրաշարական խտրմամբ Լ. Պօղոսեան գրուեր է:

ՆՍՈՅՑ ՄԸ

ՀԱՐՄԵՑՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԷՆ

Երեք աղջկանց հայր էր թաթիկ. նա առտուն կանուխ՝ խոշոր կաթկտուն զամբիւղ մը կըրռնակին, կերթար գտնել խաչածէ ճամբու մը անկիւն, զոր մինչև իրիկուն իրեն խանութ պիտի ընէր, կօշիկներ նորոգելու համար:

Բարեբաղդ էին իր կինն ու զաւակները այն օրը, երբ իրիկուն, հայրերնին՝ զամբիւղին հետ օխանոց հաց մը կ'երկնցնէր իրենց: Բայց ընդհանրապէս հացին տեղ ուրիշ ծրար մ'էր որ կը յանձնէր իր կնոջ. պանդուխտէ աղտոտ ճերմակեղէններ, լուալու համար Ահա այս էր կնոջ աշխատանքը: Գալով աղջիկներուն, որոնց երեքն ալ հարսնացուներ էին, չնչին աշխատութիւն մը ունէին իրենց ընտանեկան դժբաղդութիւնը ամօքելու գործին մէջ, մինչ իրենց թուալէթին համար խստապահանջ էին, անով ծածկելու համար իրենց տգեղութիւնը և անօթութիւնը:

Կիրակի իրիկուն մըն էր. ընտանիքին ամբողջ անդամները խորհուրդի մէջ էին.

—Վերջապէս, իմ վերջին որոշումս այս է, ըսաւ թաթիկ աղբար, այդ Ամբիւղայէն եկող տղան Շէրիֆ բաշայի մէջ ինծի չէնք շնորհք խանութ մը բանայ նէ՛ աղջիկս կուտամ, չէ նէ երթայ բարով: Ես տէրտէրօշը ասանկ լուր կը ձգեմ:

Հաւանութեան նշան ցուցուց այն օրիորդը որ խնդրոյն առարկան էր:

Շաբաթ մը անցած էր այն օրէն ի վեր, երբ յանկարծ քահանայ մը անոնց տունը մտաւ ու ժպտադեմ բարեկեց ամեն մէկը: Ներկաներն կը զարմանային այս այցելութեան վրայ, վասնզի տարի մըն էր հոս էին ու քահանայ մտած չէր տուներնին: Զերկարենք, քահանային մէկ ակնարկին վրայ հեռացան աղջիկները:

Խօսակցութիւնը երկու ժամ տեւեց, բայց չկրնալով որոշման մը յանգիլ, հարկ եղաւ Օրիորդ ***-ը կանչել ու իմացնել թէ, գաղթական երիտասարդ մը որ խանութի թէզկեհէի տէր . . . նախաճառութեամբ կը ղըբաղի, կանոնաւոր դրամ կը շահի, զինքը ամուսնութեան կը խընդրէ:

Օրիորդը որ մասամբ կը ճանչնար նոյն երիտասարդը, կը մերժէր անոր առաջարկը, առտրկելով թէ կարելի է մինչև կէս գիշեր տունը կ'ապաստենէ զինքը ու թերևս օր մ'ալ իբր օգնական գործածէ: «Տէր հայր, ամսականաւոր մէկը գիտէք նէ՛ ան ըսէք մեզի», ըսաւ ու իր 20ի մօտեցած տարիքը առնելով դուրս թաւաւ:

Ծնողքն ալ կամայ ակամայ համակարծիք գտնուեցան իրենց աղջկան: Ու քահանան հեռացաւ տրտմութեամբ, վասնզի այս երկրորդ անգամն էր որ պարապը կելլար: Բայց չյուսահատեցաւ, ականջը ետէր ձգեց, ամսականով երիտասարդ մը գտնելու համար:

Ծաղկազարդի իրիկունն էր: Այն օրը թաթիկ աղբար քիչ մը տկար ըլլալով, աշխատած չէր: Կինը ստիպուած էր այս անգամ ինքը անձամբ տանիլ լուացած լաթերը ու տիրօշը յանձնել: Բայց չկրնալով տէրերնին գտնել, տուն դարձաւ, ուր ուտելիք չկար, ամուսինը հիւանդ և աղջիկները անօթութենէ տոգունած էին:

Դուռը զարնուեցաւ:

—Ահա տէր հայրը, ըսաւ Օր. ***. անոր ձեռքը համբուրելով:

—Աստուած օրհնէ, աղջիկս, ուղածդ գտայ, ըսաւ քահանան զուարթ դէմքով. 25 տարեկան տեղացի ու աղնիւ երիտասարդ մը որ . . . ի տան մէջ ամսականաւոր պաշտօնեայ է:

—Ո՛րչափ է ամսականը, հարցուց օրիորդը, հապճեպով:

—Աղջիկս, երեք ոսկի է, բայց մօտերս անչնալու յոյս կայ:

Օրիորդը վերաւորուած զգալով ինքզինքը, տեղէն ցատկեց ու բաւաւ:

—Ամսական երեք ոսկի . . . հայտէ ըսենք թէ շաբաթը ոսկի մը խարճէ, է՛, չորրորդ շաբաթը ի՞նչ տտենք, անօթի մնանք:

Եւ դուրս ելաւ:

Քահանան որ տեղեակ էր անոնց վիճակին, երբ տունէն մեկնեցաւ, ինքն իրեն ըսաւ. «Առանկներուն ահա հեղ քիչ հեղ մօտաւ կըսեն», ու բաւական յառաջանալէ ետքը յարեց. «Եթէ օրիորդը հիմակուան անօթութեանը նայէր, ես ալ միջնորդ չէք չէի կորսնցներ»:

Աղեֆս:

ԱՇԽԱՐՀ

ՉԻՄՏԻՔ

Օսկրատն հա՛, կեղիյոր զոր սեղի սաղանարագ,
 Էօրսեֆֆեարիայագրա՛ կեղիեօր յալգանարագ.
 Տեօրք եքրաճըն սիզգիյոր պունագ սպսալար
 կիպի.
 Անմա ան՞ իսոյ կեղիյոր՝ բիսկիյիսն սաղանա-
 րագ.


Էլսե պասսօն սպանօզ, սօն մօսա յարալ սա-
 գալ.
 Արգասըն հիյսոյջանագ ան՞ գասալ ան՞ սե պագ-
 գալ.
 Տայիմա սեօգե գարըջոր զեֆի Քեյնսօժ կիպի,
 Հեր շեյին արիժի սիր. մեյմոս սր անսե հեր
 հալ.

Էյեննեյեր պաջօլար՝ իֆի պիր սեմեզ սալար.
 Բեֆ իսոյունա վարըմըջ մասնագեյեր մասսունար.
 Որանմագ ան՞ սիր պիլմեզ ֆեօսեյեր սիր սերիսի.
 Իօյուլոր՝ երևե կիսեր, բաճիզ իսեր հերֆեսի.

Սիյասիսեն սեմ ուրուր. անսե բապալեթ սե
 վար.
 Պեջ լիսանսան պահս իսեր՝ բանըմագ նաւու
 ու ար.
 Սայմա սարան սեօյեներ՝ պօջպօղազ մեօսան
 կիպի.
 Գալգրայ բահգիր իթսեն սե՛ կիպիմսեր, ան՞րսե
 վեգար.

Իլմի հիսապը եուրմուջ՝ ասեթա յօգմա կիպի.
 Պիր պիր սահա իֆիյի պուլանագ պենիմ կիպի.
 Էլիժի Գաղղգ սանր. սրմիւրը սա պիր ֆիւրրե՛
 Թիւֆիւրմեյի եիզիւնե պեօյեյերիս պիմ ֆերրե.

Լ. ՇԻՇՄԱՆԵԱՆ



ԼԵԹԱՅԻՔ

Սօկրատ պիր կիւն պիր մահալտէն կեչէր ի-

քէն՝ հերիֆին պիրիսի պիր թէքմէ վուրուր լաքին
 Սօկրատ հիչ ալարմազ. եանընտա պուլունան-
 լար նէ՛ իչիւն հերիֆէ պիր շէյ եարմատըն տէյու
 սօրտուգլարընտա, «Ատամ», սիզի տէ պիր հայ-
 վան թէքմէլէմիշ օլսա իսի. սիզ տէ պէօյլէ եար-
 մա՞զ մը իտինիզ՝ տէմիշ տիր:

—o—

—Ճանրմ պիրտտէր պու մատամընըլըն հա-
 լի նէ՛ օլաճագ. հէր ագչամ պալօյարտա, սուարե-
 լէրտէ, պու օլուր մու, հէր իքինիզ տէ սէօյլէ-
 նիյօրընըլ, պարի թէնպիհ իթսէն տէ պէօյլէ հէր
 եէրէ կիթմէսէ վէ պիր ազ քէնտիսինի շէքսէ:

—Բէք էյի, թէչէքքիւր իտէրիմ, էֆէնտիմ.
 Էկէր մատամա էվտէ թէսատիւֆ իտէպիլիւր ի-
 սէմ, իլք թէնպիհիմ պու օլսուն.

—o—

Պիր մէճլիստէ տիգգաթլա օգունմաղա շա-
 յան օլան քիթապլարտան պահս օլունտըլը զէ-
 ման, հէֆիսինտէն րէյ սօրուլմուշ, սըրա՛ մէճլիս-
 տէ պուլունան չօգ եէյէնլէրտէն պիրիսինէ կէ-
 լիւր վէ «էֆէնտիմ», սիզ հա՞նկը քիթապլը զիյատէ
 օգունմաղա շալան պուլուրընըլ՝ տէյու սօրտուգ-
 լարընտա՝ «էֆէնտիմ» պէնտէնիզ իչիւն էն պիյա-
 տէ տիգգաթլա օգունմաղա շալան օլանլար՝ լօ-
 գանթաուքի եէմէք լիթալարը տըր՝ ճէվապը-
 նը վէրիւր:

—o—

Մատամըն պիրի՛ խաթա օլան գօճաւընտան
 տէօրթ տէֆա գան ալընտըլընտան տօլայը տօգ-
 թօրա հիտտէթ պույուրըր. վէ արալարընտա շու
 սէօլէր կէչէր.

—Լաքին կէօրտիւնիզ մի, մատամ, գօճա-
 նըլ անճագ տէօրտիւնճի գանտան ոօնզրա պիր
 ազ աչըլապիլտի.

—Է՛, շու հալտէ սիզ տէ. էֆէնտիմ. քէնտի-
 սինի պուտէրէճէ զայըֆ տիւշիւրմէմէք իչիւն էվ-
 վէլքիլէրինի ալմայըպտա եալընըլ տէօրտիւնճի
 գանը ալա իտինիզ.

—o—

ՃԵՌԱԳԻՐ

Աժնաւ Բոժոժիկ եւ Ընկ.

Վերին եղիպտոս

Շքեղապէս հագուած երեք տիկիներ՝ բաց կառքով եկեղեցի եկան, և Աղքատախնամի գանձապահին դիմելով, իրենց 120ական շրուշ այրիներն գանձեցին:

Բոժ. — Աստուած չամչցունէ:

Թանքին

Նորին Վսեմութեան տան լուսաբարոհներին առաջարկին վրայ, անմիջապէս որոշուեցաւ՝ առնոր տալը երկու ուղորտագի քէնպէր՝ տղուն 100 զրշի ամսական մը յատկացնել Աղքատախնամի սնտուկէն:

Բոժ. — Աստուած ասանկ զթատիրտ աղաներուն ալ կեանքը երկարէ... ասմա խաղախիի պէս:

Պրապիւրիա

Մէկ քանի բարեպաշտուհի(?) տիկիներ՝ նըկատելով որ վարդապետին քաղախ պտտցնելու միջոցին իրենք անհանգիստ կըլլան, սոքի կելլեն, գլխարկնուն փետուրները ճէտիկին եղած՝ սիւսերնին ու կոստոնին կ'աւրտի, յայտարարեցին թէ բոլորքադիր մը պիտի ուզեն... զաւթիճի ժամկոչին:

Ժամկոչ աղբարն ալ յայտարարեց թէ, առաջնորդ որդաղանին շատ անգամ ըրածին պէս՝ ինքն ալ իրին յանձնուելիք բոլորքադիրը... միւսներ ալ իր պիտի ընէ:

Վերնաառն

Կիրակի օրը, Օրիորդ Մոնտիկ այն աստիճան... քսուած էր որ, քովը եկող կեցող մօրաքոյրը չկրցաւ զայն ճանչնալ:

Ա Ձ Դ

Հետեւեալ գիրքերը կը ծախուին Տիար Կարապետ Աստուածաստրի ֆոյ. Շէրիֆ բաշա

Փիլիպ Աղբոր Հարսնիք	դրշ. ողջ
Այիմէի Լէքայիւ, հայաստ եւ	" 1.5 "
Քրիստոս զուարճարկիներ	4 " և "
Գրպանի Երազան	50 սղմ.
Գագանի Դօմա, զօմէսի	20 փոյ.
Մանուկայեքիկ Միսէաւարք	20 "

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

«Հայեղի»ի սպարանին մէջ դիւրամասշտի գնով կը սպագրուին առեւտրական տներու համար ամեն յեղուէ՝ Բարիգեան զերջին դրոքեալք հե-
սաքրաւարժ, պատկերազարդ եւ գունաւոր փո-
րիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ այ-
ցեւսնու, հասցեսոն, հարսանեկան հրապարակ
մահազդ, նամակագրիւ, պահուստ, տոմար, եւն.
Ուրիշ ֆաղափներէ եղած յանձնարարութիւն
ալ փոքրով կը կատարուին:

ՅԱԿՈՐ ԳԱՐԱԿԷՕԶԵՐՆ

Ուղ-էլ-Աքքարին

Կը ծանուցանէ իւր յարգոյ յանախորդաց քե-
ին յայտ ուրիշ տարիներ, այս տարի եւս յատկապէս
քերել տուած է 2 ինկան, Հնդկական եւ Սեյա-
նի ընտիր եւ հոսանքս քեյեր, ուղի գործածութի-
ւնը ներկայ եղանակիւ մէջ շատ օգտաւար է:
Կը վաճառէ նաեւ մազի համար ընտիր նե-
կեր ամեն գոյնէ: Գիները չափաւոր:

2 Ո Ւ Լ Ա Ր Ա Ն

Գ Ր Ի Գ Ո Ր Ռ Ա Յ Ա Է Լ Ե Ա Ն

Թիւ 5 Շարա Ապտիւլ-ապիլ, Գահիր-

Կը ծախէ ամեն յեղուէ սպագրական տներ,
ծաղիկ, անթերիկ եւ կատարներ:
Առաջին օրէն իրեն նշանաբան ընտրած է ող-
որթիւն եւ արագութիւն: Իրեն դիմողները միշտ
գոն մնացած են:

Ա Շ Ո Տ Փ Ա Լ Ա Ե Ա Ն

Սպագրական ամեն տեսակ գործերու կաշու-
նիւ, փորագրիչ, քէ տուսիւ եւ քէ պղինձի փայ,
կը պատրաստուին նաեւ զանազանական կնի-
ներ՝ մետաղէ եւ ֆառյոյն:
Աղեփաւորիւ, Թրակ փողոց թիւ 22